

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Բօմէստվէնսկու պարտութիւնը. Խաղաղութեան առաջարկներ. Միացեալ նահանգների նախաձեռնութիւնը. Երկու պետութիւնների պատրաստակսմութիւնը. Ներկայացուցիչների տեսակցութեան խնդիրը. Խաղաղութեան պայմաններ: — Նախիջևանի Հայերի ողբայի դրութիւնը. Հայերի գաղթը. Արիւննեղութիւն Շարուրում և Պարավագեազում. Սովի անկնկալութիւն. Ռուս զօրքի ներգործական դիրքը. Թուրքերը զէնք ունին, իսկ ճայերը ոչ. Հրէշային սպանութիւններ Նախիջեւանում: — Համրսլամական շարժման նախանշաններ Անդրկովկասում: Թուրք խուժանի երեւակայութիւնը. Ռուս մամուլի եւ կառավարութեան վերաբերմունքը դէսի համրսլամութիւնը. Պարսկաստանը եւ Պարսից Շահը Կովկասիան կոտորածների մասին. Թուրքերը հաւասարիմ հավատակներ ուս պետութեան. Հա՞յ թէ Թուրք տարրն է յուսալի Կովկասում: Հայ յեղափոխական կազմակերպութիւնները. Հայն իբրեւ բարեկամ ուս սուհնու: — Վ. հի. Կամոյիկոսի Տիգիս ժամանելը եւ Փոխարքայի հետ տեսակցութիւնը: Պրիսց Նվպաօչօնը զենիրապ-նահննզապետ ներեւանում: — Էպիփառոսական ծեռնադրութիւն: «Նոր Պարք-ի վերակումը: — Նսմակ Գանձակից: ՆՈՐԱՇԵՆՑԻ: Կոնդակ:

Խոշոր խնդիրների մէջ ներկայումս կարևորագոյնը խաղաղութեան խնդիրն է Ռուսիայի համար. Ռօֆեստվենսկու նաւատորմի սոսկալի կործանումից, այսինքն Ռուսիայի պատերազմական վերջին զօրութեան անկումից յետոյ ուս հասարակութիւնը և մամուլը միաձայն պահանջեցին, որ շուտով եապօնիայի հետ խաղաղութեան դաշն կապուի երկրի վերջնական քայլայման առաջն առնելու համար: Նոյնը պահանջեցին շատ դուկան և կտրուկ ոճով նաև երոպական պետութիւնները, որոնց շահները այս կամ այն կերպ կապուած են անիմաստ պատերազմի հետ: Առանձնապէս յուզուեց Ֆրանսիան, Ռուսիայի դաշնակից և միակ անկեղծ բարեկամը իբրև պետութիւն: Անկեղծ ենք ասում, որովհետև Ռուսիայի վերջին տասնուհինգ տարուայ ընթացքում ձեռք բերուած զենուրուական զօրութիւնը Փրանսիացիների փողերի արդիւնքն է: Հասկանալի է, որ ֆրան-

սիացի ժողովուրդը տալով ոռուսներին աւելի քան 9 միլիարդ ֆրանկ փոխառութիւն, պէտք է ամենից աւելի հետաքրքրուի իւր պարտապանի վիճակով և ամեն ջանք գործ դնի իւր դրամը յետ ստանալու երաշխաւորութիւնը ապահովելու ։ Իսկ այս կարելի է միայն այն ժամանակ, երբ Ռուսիան կազատուի քայլայիչ և անմիտ պատերազմի ծանրութիւնից և կսկսի լրջօրէն զբաղուել իւր ներքին վիճակի բարենորոգմամբ։

Ֆրանսիացի ժողովրդի ստիպմամբ ֆրանսիական պետութիւնը մամուլի միաձայն կարծիքից խրախուսուած սկզբում անվստահ, ապա հետզհետէ աւելի ու աւելի որոշ եղանակով պահանջեց Ռուսիայից հաշտուել Եապօնիայի հետ թէ իրան և թէ իւր դաշնակցին փրկելու համար։ Սակայն Ֆրանսիայի պահանջը եթէ կարող էր ազդեցիկ լինել Ռուսիայի համար, բոլորովին աննշան էր իւր զօրութեամբ Եապօնիայի համար, որի համար Ֆրանսիան սոսկալի չէ։ Իսկ հաշտութեան խնդիրը աւելի Եապօնիայիցն է կախուած իրեն յաղթող պետութիւնից քան Ռուսիայից։ Հարկաւոր էր աւելի անաշառ և աւելի ազդեցիկ մի պետութիւն, որ կարողանար երկու թշնամիների համար ևս հաւասար նշանակութիւն ունենալ։ Մի այսպիսի միջնորդ պետութիւն ոչ Անգլիան կարող էր լինել, որ Եապօնիայի դաշնակցին է, ոչ Գերմանիան, որի շահամոլ քաղաքականութիւնը աւելի քան կասկածելի է անկեղծութեան կողմից և ոչ Իտալիան և Աւստրօ-Հունգարիան, որոնք համեմատարար առանձին հեղինակութիւն չունին։

Միակ Պետութիւնը, որ կարող էր «ազնիւ միջնորդի» դերը յանձն առնել, եղաւ Ամերիկան։ Եւ այս շատ բնական է։ Ամերիկեան հանրապետութիւնը աւելի քան որ և է մի ուրիշ պետութիւն կարող է խոճի մտօք ասել, թէ իր միջնորդութիւնը անկեղծ է և սեպհական շահերի տեսակէտից անկախ։ Բացի դրանից, առհասարակ պետութիւնների արտաքին քաղաքականութեան մէջ Ամերիկան այժմ ամենից զօրեղն է, որովհետեւ ամենից քիչ է զբաղուած ինտրիգներով։ Եւ Հանրապետութեան տաղանդաւոր և համարձակ նախագահ Ռուզվելտը, որ վաղուց էր աշխատում պատերազմին վերջ տալու մասին, Ռոժեսսավլենսկու կործանումից յետոյ անմիջապէս դիմեց Եապօնիային և Ռուսիային և պահանջեց վերջ տալ պատերազմին, որ այնքան վնասներ է տուել և տալիս մարդկութեանը։

Եապօնիան յայտնեց իւր պատրաստակամութիւնը Ռուզվելտի առաջարկն ընդունելու, եթէ հարկաւ, Ռուսիան կամենում է։ Ռուսիան սրտի խորին կսկիծով խոնարհուեց ճակա-

տագրի հրամանների առջև և ազդարարեց, որ պատրաստ է բանակցութիւն սկսել իւր թշնամու հետ: Ռուզվելտը բնականաբար պահանջում է, որ խաղաղութեան մասին բանակցութիւնը կատարուի ոչ զէնքերի շառաչյւնի տակ, այլ հանգիստ, ոյսինքն ժամանակաւոր զինադադար լինի: Ռուսիան համաձայնուեցի: Սակայն Եապօնիան պահանջեց, որ զինադադարի խնդիրը լուծուի ոչ ուրիշ տեղ եթէ ոչ պատերազմի դաշտում և ոչ ուրիշ անձանց մէջ, եթէ ոչ երկու հրամանատարների Օեամայի և Լինեվլիչի մէջ: Հասկանալի է, որ Եապօնիան շատ էլ մեծ հաւատ չի ընծայում Ռուսիայի անկեղծութեանը: Նա վախենում է, որ Ռուսիան օգտուելով զինադադարից, իւր որմերը կը կազդուրի և նորից կը շարունակի պատերազմը, ուստի և չի կամենում զրկուել պատերազմի դաշտում իւր ներկայ դիրքից, որ այնքան յաղթական է և վտանգաւոր Լինեվլիչի բանակի համար: Վերջին տեղեկութիւններից մեր ընթերցողները գիտեն արդէն, որ բանակցութեան տեղ ընտրուած է Հանրապետութեան մայրաքաղաք Վաշինգտոնը, դէպի ուր ճանապարհուել են արդէն թէ Ռուսիայի և թէ Եապօնիայի պատգամաւորները դէմ առ դէմ ըննելու խաղաղութեան պայմանները:

Ահա այս վիճակի մէջ է տակաւին խաղաղութեան խընդիրը: Մինչդեռ Օիաման շարունակում է իւր ընթացը դէպի Խարբին: Վերջին հեռագիրներից երեսում է որ նա արդէն սկսել է արշաւել Լինեվլիչի բանակի վրայ և երկեւդ կայ, որ վերջինը շուտով կը շրջապատուի և միջոց անգամ չի ունենալ փախչելու Խարբին Յայտնի է նաև, որ Սախալին կղզին արդէն գըրաւուած է Եապօնացիններից և անունն էլ փոխուած:

Միւս կողմից Եապօնիան դեռ վստահ չէ, արդեօք, Ռուսիան կընդունի իւր ծրագրած պայմանները խաղաղութեան, թէ չէ: Իսկ Ռուսիան սրտի տրոփիւմով սպասում է, թէ որչափ իրագործելի և պատուաբեր պիտի լինին այդ պայմանները Եւրոպական մամուլը ճիգն է անում գուշակել այդ պայմանները, բայց նրանք տակաւին յայտնի են միմիայն Ռուզվելտին, որ խօսք է տուել առ ժամանակ ոչ ոքի չը հաղորդել: Գոշակուում է, որ այդ պայմանները շատ էլ թեթև չը պիտի լինին Ռուսիայի համար և յամենայն դէպս պիտի շօշափեն նրա պատիւը: Եթէ տակաւին Ռուսիան իրան մեծ Պետութիւնների մէջ է համարուած: Անկասկած է մի բան, այն է, որ Եապօնիան պիտի պահանջի Ռուսիայից մի անգամ առ միշտ ձեռք վերցնել Հեռաւոր-Արևելքից, մաքրել Եապաղ Ովկիանոսը, / ուր նա արդէն վերջնականապէս ուժասպառ է եղել: Բացի դրանից, այս ան-

գամ Եապօնիան այլ ևս շատ կտրուկ եղանակով է խօսում կօնարիբուցիայի մասին, իսկ Ռուսիան արդէն սկսում է հաշտուել այն մտքի հետ, թէ պէտք է վճարի Եապօնիայի ծախքերը:

Կայ մի ուրիշ կէտ, որ նոյնպէս շատ նշանաւոր է: Թօքիօի ազդեցիկ լրագիրների և դիպլոմատների ասածներից երեւում է, որ Եապօնիան շատ էլ մեծ հաւատ չի տածում Ռուսիայի գրութեան Նա կարծում է, որ իւր հակառակորդը եթէ դաշնակցութիւն կապի, չի կարող իւր խոստումները կատարել: Այլ խօսքով, Եապօնիան, որ շատ լաւ տեղեակ է Ռուսիայի ներքին կեանքին, տրամադրիր է վերանորոգուած Ռուսիայի հետ դաշն կապել: Նա Ռուսաց ներքին կեանքի այժմեան ոեժիմը համարում է մնանկ, իսկ ուսւ բիւրօկրատիային—ոչ ընդունակ խաղաղութեան դաշն ամուր կապելու: Պարզ ասած, Եապօնիան պահանջում է ամբողջ ոուս ժողովրդի ներկայացուցիչների երաշխաւորութիւնը: Նա, իրեւ բուն սահմանադրական պետութեան, կամենում է սահմանադրական պետութեան, այսինքն իւր հաւասար մի ոյժի հետ գործ ունենալ:

Ռուս հասարակութիւնը ճիշտ այնպէս է մտածում, ինչպէս Եապօնիան: Նա պնդում է, որ, սկսելով խաղաղութեան մասին բանակցութիւն, անհրաժեշտ է միաժամանակ, հրաւիրել ժողովրդի ներկայացուցիչներին: Թող ինքը ժողովուրդը ուրոշի խաղաղութեան պայմանները և ինքն իւր ներկայացուցիչների միջոցով դաշն կապի Եապօնեայի հետ: Բիւրօկրատիան ցոյց տուեց իւր մտաւոր տկարութիւնը, սկսելով մի անմիտ պատերազմ, կրեց ահոելի պարտութիւն, մնանկացաւ: Միթէ մնանկն ունի՞ իրաւունք որև է պարտամուրհակ ստորագրելու: Մնանկ է նաև ոուս դիպլոմատիան, այնքան մնանկ, որ այսօր երպական պետութիւնները բացարձակ արհամարհանք են ցոյց տալիս նրան: Ուրեմն պիտի մի կողմ քաշուեն ոուս բիւրօկրատիան, ոուս դիպլոմատիան և ասպարէզը թողնեն ոուս հասակութեան խոհուն, ազնիւ և անկաշառ մասին՝ նրանց դարաւոր սխալները մի կերպ ուղղելու:

Այսպէս թէ այնպէս, պատերազմը պէտք է վերջացնել: Այս զգում է նաև ինքը բիւրօկրատիան: Այժմ նա խօսում է քոլորվին ուրիշ լեզուով: Դեռ չորս ամիս չի անցել այն օրից, երբ ոուս պետութիւնը պաշտօնապէս ազդարարեց, որ պատերազմը Եապօնիայի դէմ մղւում է Ռուսիայի տիրապետութիւնը Խաղաղ Ռվկրանոսի ափերում հաստատելու համար: Այժմ նոյն

պետութիւնը համաձայնութիւն է յայտնում խաղաղութեան մասին բանակցութեան մէջ մտնել: Այս նշանակում է, որ պետութիւնը միանգամայն կորցրել է իւր յօյսը «Խաղաղ Ովկիանոսում իւր տիրապետութիւնը հաստատելու», եւ այս այսպէս մինելուց յետոյ դեռ գտնուում են մարդիկ, որ պահանջում են շարունակել պատերազմը: Պաշտօնական պնակալէզների օրգան «Մօսկ. Յնդոմօստի» դեռ խրոխտանում է Ռուսիայի չունեցած ոյժերով և կաշուց դուրս է գալիս ապացուցանելու, թէ Եապօնիային կարելի է ջարդել, այսինքն պնդում է, թէ կարելի է լուսինը ուրակոծել: Սակայն մի՛ կողմ դեռ «Մօսկ. Յնդոմ.» «Հօն. Վրեմյ» և այլ մի քանի համանման օրգանների զառանցանքները: Նորերս համայն Եւրոպային տարակուանքի մէջ զցեց Ժեներալ Կուրօպատկինի հեռուագիրը Մոսկուայի ազնուականների պարագլիսի անունով: Քաջարի ժեներալը պնդում է, թէ Ռուսիան դեռ կարող է յաղթել Սապօնիային, ուրեմն պէտք է պատերազմը շարունակել: Ռուսաց և երոպական մամուլը միաձայն հարցրեց Ժեներալին՝ ինչո՞վ: Նաւատորմիդ չը կայ, որը կիսով չափ պակասել է, փող չը կայ, վարկ չը չկայ, ինչո՞վ:

Հարցը դեռ մնում է անպատասխան:

Հաշտութեան հակառակ է նաև ուռաց զօրաբանակի զըլ-խաւոր հրամանատար կինելիչը: Ահա ինչ է հաղորդում այս մասին Պարիզի «Temps»-ը: Ժեներալ կինելիչը զինուորական խորհուրդ է կազմել և երկու ժամ խորհրդակցութիւնից որոշուել է Պետերբուրգ ուղարկել հետևեալ հեռագիրը: «Լսելով նախագահ Ռուզվելտի բարի ծառայութիւնների և Ռուսաստանի համաձայնութեան մասին, սկսել բանակցութիւն Սապօնիայի հետ հաշտութեան համար, ես իսկոյն կազմեցի բարձրագոյն զինուորական խորհուրդ զօրաբանակի այն բոլոր իշխանաւորներից, որոնք ներկայում գտնուում են իմ մօտ: Քիննելով հաշտութեան շարժառիթները և այն դիրքերը, որ բռնած են պատերազմող զօրաբանակները, ես պատիւ ունիմ հազորդել, որ բոլոր իմ ընկերները ինձ հետ միասին եռանդագին և միանողի ձայն տուեցինք պատերազմը շարունակելու մինչև այն օրը, երբ Ամենակարողը կը հաճի յաջողութեամբ պսակել մեր քաջ զօրքերը, ժամանակ չէ խօսելու հաշտութեան մասին Մուկդենի և Ցուսիմի ճակատամարտերից յետոյ: Մեր թշնամին, իւր յաջողութիւններից արբեցած անշուշտ առաջ կը մղի այնպիսի պայմաններ, որոնք հակառակ կը լինին մեր հայրենիքի պատուին: Սակայն, հիմք չըկայ ընդունելու այդ պայմանները: Մենք դեռ այդ ծալրայել դրութեան չենք հասել: Կասկած լուսը

Նը կայ, որ մեր պարտութիւնը ծուսիմում (Խօժեստվենսկու հաւատորմիդի կործանումը) ողբալի է, բայց այն ոչինչ կապ չունի մեր քաջ գորաբանակի հետ, որ գոնւում է հիանալի դրութեան մէջ և զերմ փափազում է վրէժ առնել թշնամուց և յաջողութիւն ձեռք բերել, յուսով եմ, մօտիկ ապագայում Մեր գօրքերի բռնած դիրքերը շատ գերազանց ամրացրած են: Մինչև այժմ անձրևային եղանակը խանգարում էր ինձ յարձակողական դիրք բռնել, բայց այժմ, երբ մեր Մուկդէնի մօտ ունեցած կորուստները լրացրած են, երբ մեր գօրաբանակը ուժեղացրած է Եւրոպական Ռուսիայից եկած նոր գօրքերով, ես զգում եմ, որ կարող եմ յաջողութեանմբ դիմադրել թշնամուն: Յոյս ունիմ այս ամսուայ ընթացքում (Յունիսի) յարձակումն սկսել, որով միանգամայն կը փոխուի գործի դրութիւնը: Դարձեալ կրկնում եմ. Ռուսիան կարող է լիովին հաւատալ մեր գօրքերի ուժին և զօրութեանը: Մեր գրութիւնը բնաւ այնքան տագնապալի չէ, որ անհրաժեշտ լինի կապել հաշտութեան դաշն, որի պայմանները Ռուսիայի համար անշահաւէտ կը լինին»:

Այս համարձակ որոշման տակ բացի Լինեվիչից, ստորագրել են տասնումէկ գլխաւոր ժեներալներ, որոնց թւում դարձեալ քաջամարդիկ Կուրօպատկինը:

Հիսաքքրքրականն այն է, որ եազօնական գօրապեսներն էլ դէմ են հաշտութեանը: Օեաման խնդրում է միկատին յետաձգել բանակցութիւնը մինչև նոր ճակատամարտ, որ սպասում է յունիսի ընթացքում և որ անշուշտ մի նոր յաղթութեամբ պիտի պսակի եապօնական գօրաբանակը: Բայց նշանաւոր տարբերութիւն: Օեամային ձայնակից է իւր հայրենիքի հասարակական կարծիքը, իսկ Լինեվիչի մնութի յոյսերին չի ծափահարում Ռուսիայում և ոչ ոք, բացի Սովորինից և Գրիգորունտից. չի ծափահարում նոյն իսկ բիւրօկրատիան: Այսպէս, Մայիսի 25-ին Պետերբուրգում կայացած արտաքոյ կարգի խորհրդում մասնակցող բարձրաստիճանն պաշտօնեաներից եւ ոչ մէկը յօգուտ պատերազմի շարունակութեան ձայն չի տուել:

Հաշտութիւնը Ռուսիայի համար այնքան է անհրաժեշտ, որքան մաքուր օդը թոքախտաւորի համար:

Ամսից աւելի է անցել, Նախիջևանի գաւառում արիւնակութիւնը չի դադարում: Թիֆլիս հասած տեղեկութիւններից երեսում է, որ դէպքերը քանի գնում այնքան մոայլ կերպարանց